

## ԿԵՂԾ ՀԱՅԵՐ.

Երբ Հայ եղբօրդ քաղցած ժամերում  
Մի կտոր չոր հաց դուտալ չես ուզում,  
Նորա ծարաւից պապակուած լեզուն  
Երբ մի բուռն ջրով չես զովացնում,  
Եւ երբ խղճափի նորա մերկութիւն  
Գէթ ցնցոտիքովդ երբէք չես ծածկում,  
Երբ ազգիդ պէսպէս պէտքերի համար  
Փակումես հարուստ քակիդ թրան,  
Թէկուզ դու այնքան զանձեր ժողովես,  
Որ կրեսուիցն էլ զերազանցես,  
Հաւատու, որ դու ոչ միայն հայ չես,  
Այլ հայ ազգութեան մեծ նախատինը ես,

Ազգի թքանք ես,  
Մարդ անուանուելու անզամ արժան չես:

Երբ քո ամմնական անարդ շահերին  
Չողումիս քո Ազգն ու Եկեղեցին,  
Երբ քո սրտի մէջ մարմնոյ համոյքնիր  
Խեղդել են ամին ազնիւ զգացմունքներ,  
Երբ մատոնայի սիրով կուրացած՝  
Օտարաց օգտին դու դործիք դարձած՝  
Չես խղճանարփում քո ծեռքով քանդել  
Քո ազգի տունը, եւ երբ քո եղրաց  
Տղիտութիւնից օգուտ քաղելով,  
Քո կեղծ, ռունալից, քաղցր խօսքերով  
Խուսմես նրանց խրեանց պապերից  
Մտացած սուրբ կրօնի եւ Ազգի ծոցից.

Եւ վերջապէս, երբ չարն իրեն բարի  
Ռեսուցանել խեղճ, տղէտ ամբոխին  
Դու նպատակ ես արել քո կեանքին,  
Թէկուզ դու հրան զրնս, քարոզես  
Եւ քեզ ազգասէր ծեւացնել ուզես,  
Հաւատու, որ դու ոչ Թէ ազգասէր՝

Ա. Արծաթասէր

Մատնիչ Վասակ ես:

Հայ անուանն անզամ դու արժանի չես:

Երբ դու անտեղեակ քո ազգի կեանքին  
Եւ նորա պաշտած ամբիծ կրօնքին,  
Համարձակվումես ևնել նրապարակ  
Եւ նոցա շահուց ծեւանալ պաշտպան:  
Երբ անբարեմիտ մարդկանց ծեռքերում  
Խաղակիք դարձած՝ անմեղ սրտերում  
Երկպառակութեան որումն ես ցանում,  
Եւ պարզամտները զայթակղեցնում.  
Եւ վերջապէս երբ քո Թիւր ընթացրով  
Ցոնք շինելու տեղ աչքն էլ ես հանում,  
Թէկուզ դու այնքան փիփոփայ լինես,  
Որ Առկրատէսիցն էլ զերազանցես,  
Հաւատու, որ դու հարազատութեամբ  
Ազգիդ ծառայել տնընդունակ ես.

Եւ կամ յայտնապէս

Վարժիւն ՀՀ-է ես

Որովհացան ես:

Ա. Վ.

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

ԵԶՆԻԿԻ ՔԱՀԱՆԱՑԻ ՀԱՅՆԱԳԲԵԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ:

Ձեռքս անցնելով բարեկրօն Եղնիկ քահանայի աշխատասիրած և Մայր  
Աթոռոյս տպարանում տպեալ Զայնազքեալ մանկական երգարանը, ա-  
ւելորդ չհամարեցինք մի քանի նկատողութիւններ անել տպուած երգերի  
և նոցա ձայների վերայ:

Արովչետեւ առաջին անգամն է որ, մեր մէջ լոյս է տեսնում տպա-  
զրուած ձայնագրեալ մանկական երգերի մի ժողովածու, որը ընդհան-  
րանալուց զինի, անկարծիք մեր զպրոցներում իրբէ ձեռնարկ պիտի ծա-

ուայէ, երեխայոց ազատելով՝ այսուհետեւ բերանացի աւանդուած անահորժ երգերի դասապութիւնից, ուստի յիշեալ քահանայն իւր պյս փոքրիկ ձեռնարկը պատրաստելուց յետոյ, շատ լաւ կանէր նախքան տպագրուելը, յանձնէր այն հմուտ յառաջադէմ ձայնագրագէտ անձանց քննութեան, որոց աշակերտակից ընկեր է եղել երբեմն, և կարեռ օգուտ ներ քաղելով՝ նոցա հաւանութեամբ և իորհրդով ապա տպագրել տար:

Երգեցողութիւնը, մարդիս կեանքին և զգացմանց նպաստող այն կարեռ առ արկաներից մինն է, որի արժանաւորութիւնը ճանաչել է ամենայն աշխարհ՝ և օր աւուր հետամուտ է լինում՝ նորա ծաղկման և տարածման:

Անմարդաբնակ անապատների մէջ, արիւնարբու և բիրդ աւազակի ապառաժ սիրտը ի գութ շարժողը, և նորա կատաղի բարկութիւնը մեղմացնողը երգեցողութիւնն է, որի անընկճելի բազուկների միջից յանկարծուստ ազատարար զուրս է թուչում անզօր երգիչը:

Արիւնահեղ պատերազմներում, քաջ զօրավարի մէջ մէկ առանձին արիական ոյժ արծարծողը և բորբոքողը երգեցողութիւնն է, որին սէդ սէդ քայլերով անվեհեր յառաջ է մղում, թէև թշնամու գնտակը կլանէ նորան:

Մինչև իսկ կաթնակեր մանկան օրօրոցի մէջ քաղցր նինջ պարզեռողը երգեցողութիւնն է, որի ճիչ ու աղաղակը տկարանում են նորա ազգու զօրութեան յառաջ գէմ դնել:

Աստուծոյ երկի, զը, նորա ահեղ դատաստանը, եկեղեցի մտած ժամանակներս սոսկումով և արհաւելքով մեր առաջ պատկերացնողը երգեցողութիւնն է, որ ստիպումէ մեզ յաւիտենական կեանքից զրկող աշխարհի բոլոր ունայնութիւնների հետ չկապել մեր հոգին:

Աերջապէս մեր տխուր և զուարթ օրերը ծափ ու ծիծաղով, խինդ ու հրձուանքով անցուցանողը երգեցողութիւնն է, առանց որոյ ապրելը, անկենքան զի է նշանակում:

Ապա ուրեմն, երգեցողութիւնը մարդիս վերայ միշտ ներգործող առարկայ լինելով՝ շատ ջանից պէտք ունի և նորան մշակելու դործը:

Կարգալով եղնիկ քահանայի երգարանը, տաժանելի աշխատութիւն միայն բառերի մէջ նկատեցինք, իսկ ձայնների վերաբերմամբ ոչ երբէք: Աւսոն զի երգերի մեծագոյն մասը իրենց բառերի համեմատ զրեթէ զրաւիչ և քաղցրալուր եղանակ չունին: Երեխայք առհասարակ միշտ համել և ոգևորիչ եղանակ են սիրում: տաղտկալի է նոցա համար մի որ և իցէ երդ, երբ անկանոն կերպով բարձրանումէ և իջնում: որոնցով դժբաղդարար լի է յիշեալ երգարանը: Թէպէտ եղնիկ քահանայն իւր յառաջարանի մէջ յիշումէ որ, մի քանի երգերի ձայնը փոխ առած է օտար երգերի ձայնից, այնու ամենայնիւ նայելով երգերի ձայների մէջ ընդ մէջ անսահման բարձրանալուն և անսահման ցածրանալուն: Երեւ-

է, մենք կրաժանենք երգարանը երկու մասի, այսինքն, յշնը համապատասխան, իսկ իշխան առաջազնաւ մանկան:

Հաւատումենք որ Եղնիկ քահանայն իւր երգերի ձայները անշուշտ եւ-  
րոպական ամենընտիր երգերի ձայներից փոխ առած կլինի, բայց զիտե-  
նալու է որ, մեծ մասամբ երոպական երգերը առանձին երգվելու ըն-  
դունակութիւն չունին. և եթէ երգվումն՝ այն ևս անախորժ և աններ-  
դաշնակ են լինում. ապա ուրեմն պիտի ընտրէր այնպիսի երգեր, որնք  
իրենց սահյուն և փափուկ եղանակովը նմանէին «ԱՇ ՏԵՐ ՊԵՏ ՀԱ-  
ՅԵՐ» երգի ձայնին (եր. 6.) և ոչ անպէտք երգերով իւր երգարանի զիրքը  
ստուարացներ:

Երգարանի երկրորդ եւ երրորդ մասերի մեջ ամփոփուած բոլոր երգերը  
(բացի ԱՇ ՏԵՐ ՊԵՏ ՊԵՐՊ շնորհ շնորհ) և ԻՆՉ ՌԵՎԱՆ ԵՎ (երգերից, այնպէս են  
կազմուած՝ որ միայն ուսումնարանում կհարկաւորին. իսկ դուրսը եր-  
գելու համար բոլորովին անպէտք և անզործազրելի են. գուցէ հենց այդ  
է պատճառը որ բարեկրօն քահանայն խորհրդով իւրաքանչիւր մի երգի  
տակ երկար ծանօթութիւն է զրիլ յլ, շրջանմ ցոյց տալով մանուկնե-  
րին, որպէս զի եղանակը ներգաշնակ դայ:

Ինչպէս վերը յիշեցինք, երգեր աչքի ընկան: որոց ձայնը չէ համապա-  
տասխանում իրենց բառերի իմաստին. զոր օրինակ «ԻՆՉ ՌԵՎԱՆ ԵՎ ԴԱ-  
ՄԵԼԻ» երգի ձայնը, որ առնուած է «ԻՆՉ ՌԵՎԱՆ ԵՎ ԴԱ-ՄԵԼԻ» երգի ձայ-  
նից, այդպիսի միջպատուական և սրտաշարժ եղանակ շատ աւելորդ էր շան  
պատճութեան վերայ զնել, որ յատուկ օրիորդի սիրով խորոված երի-  
տասարդի հանապազորեայ մրմունջ է և ամենենի եղանակը կապ չունի  
իւր նոր բառերի հետ. Երգեր ևս կան, որոց ձայնը տգեղ և անհաճոյ  
լինելով, դարձեալ անհամապատասխան են երգի բուն ոգւոյն զոր օրինակ.  
«ԱՄԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՐՄԱՆԻ ԲԵՐԲԵՐ»: և «ՈՎ ԴԵ-Ա-ԱՆ Դ-Ե-ԵՎ-ԵՎ», եր. 37 և 38.

Եղանակներ լաւ չիմանալու պատճառաւ եւ. քահանայն սիալ է ձայ-  
նագրել և մի քանի հին երգեր, աեղ տեղ փոխելով նոցա տեսղութեան  
չափերի կանոնաւոր ընթացքը և ձայնը. այսպիսիներն են «ՑԵՐԵ-Ց ՔԵՐ»  
«ԱՆԻ ՑԵՐԵ» և մասամբ «ՄԻՆԵ-Ա-ՆԻ ՖԵ-Ե-Ե-Ե-Ե» եր. 41. 43 և 44:

Իսկ այն երգերը, որոնք երգարանի առաջին և վերջին մասն են կազ-  
մում, մինը Աղօմքներ, իսկ միւսը Յաւելուած վերնազրերով, որոց  
ձայնը հաւանական է թէ ինքն քահանայն թերեւս հեղինակած լինի, չզի-  
տեմ մանկան վերայ ինչ տպաւորութիւն պիտի գործեն. ինչպէս թելա-  
զրել է իւր կամբը, ըստ քմաց խառնիխուուն շարել է ձայնանիշեր, ա-  
ռանց մտածելու թէ արդեօք երեխան առանց ուսուցչի կարող է առան-  
ձին կերպով սովորել և երգել. կամ առաջինը իրրեւ աղօմք գործածելու  
և վերջինը իբրև ծիծաղաշարժ զուարձալիքներ, ինչ յարմարութիւն ունին  
մանկանց համար. խօսքերիս ապացոյց մանուկների բնութեան հետ ընահ-  
լացած մշտապէս ձայնագրութեամբ պարապող ձայնագրագէտը ևս կհա-  
մաձայնի ինձ հետ, եթէ միանդամ ուշի ուշով փորձ փորձէ կարգալ և

կտեսնէ թէ ի՞նչպէս բոլորը կցկտուր և անձունի եղանակ ունին։

Յառաջաբանի ը. երեսում՝ երգեցողութիւնը մանուկներին զիւրին ու-  
ժով առանգելու համար զրումէ ։ երգեցողութիւնը պիտի աւանդուի մա-  
նուկներին մատչելի լեզուով հասկանալի նիւթով և պարզ եղանակով ։  
Մատչելի լեզուով հասկանալի նիւթով գուցե կյաջողուի Եղնիկ քահա-  
նային իւր երգաբանի հատընտիր զրուածները ըմբունել տալ մանուկնե-  
րին։ բայց ուրեմն եղանակ ասելով ինչ է կամենում՝ հասկացնել ։ մի՛թէ  
երգի ձայնը նորա կանոնաւոր ընթացքը, և զրութեան ձեւը աղաւաղելով  
ուրեմն եղանակ կցառնայ, և հետեւապէս մանուկներին զիւրըմբռնելի՞  
կլինի. ինչպէս արել է ։ Եբբու բայց բայց բայց յառա ։ երգինը եր. 50. որ  
ինքը բուն երկրորդ ձայն է և կզրուի ։ չափով, մանաւանդ զրուածը լի  
լինելով սարսափելի սիալներով՝ այն քաղցրութիւնը չունի. ինչ որ եր-  
գումէ առ հասարակ մեր ժողովս ըզը Պուշ եղանակով է զրել ։ Այս ու-  
ժիքի ։ Այս ուժութիւն է կերպված ։ Այնիւ շնչեր ։ Ինչ սիրուն է ։ Պուշ է ։ Շնչերի  
ուժու գուշակ ։ երգերի ձայնները, սոցանից չորսը նոյնպէս երկրորդ ձայն են։  
Առաջինը տարրեր բառ երով ձայնազրուած հրատարակուեց երկան Առնիքի  
երգաբանի մէջ ։ երկրորդը մեզանից յառաջագէմ աշակերտներից մին ձայ-  
նազրեց ։ Թաշեանի գասատուութեան օրօք ։ իսկ վերջինը երլորդ ձայն  
տեղափոխուող առաջին կողմն է պատարագի արարողութեանց նման։ Աը-  
խալ է ձայնազրել և ։ Հերեւուի յառա ։ երգի ձայնը պիտի սկսէր ։ ից։

Բողոք երգերի ձայնը, սկզբնական ութմնեակի վերածելու օգուտն ո՞նէ, որ արել է քարեկրօն քահանայն Երզը, ըստ պահանջման կանոնի երկը- րորդական ութմնեակով գրած ժամանակն ես միթե փոխում է իւր եղա- նակը, Եթէ սկզբնական ութմնեակով գրելը հշշութիւն կպատճառէ ման- կան, ապա ուրեմն ինչո՞ւ մի ուղղութեամբ չէ հետեւ զրել բալորը. զօրո- րինակ, «Փոյլ-» որևէ որ ձայնով նման է, ունչ սկը-ն եւ ուս էմ շին, — եր- պին, ինչո՞ւ տարբեր ձայնանիշերով է գրել. կամ թէ, «Շոռ-» լունեն+, և «Զ-» և «Ե» լունեն+ և շին, — երգերը, ինչո՞ւ սկզբնական ութմնեակի չէ վերածել եթէ հեշտութիւնը միայն սկզբնական ութմնեակով գրելու մէջն է, Կմ կարծիքով երզը զիտակցարար սկզբնական ութմնեակի վերածելը՝ բնաւ օ- գուտ չունի մասնկան համար. Օգուտ չունի առաջին, որ ձայնանիշերը տե- ղափոխուելով, զժուար է մանկան նոցա համանման ձայնանիշերը երկրոր- դական ութմնեակի մէջ զտնել, երբ տկարանումէ մի երգի լուծման մէջ. և այս ձայնեազրութեան կանոնների մէջ բոլորից զժուարն է, և աւանդումէ աշակերտին ութն ձայնը օրինաւոր աւարտելուց յետոյ, Երկրորդ, երգի մէջ զանազան ստուարանիշ ձայնանիշեր՝ մասնելով, նոցա ուղիղ հնչելու համար հաստ և խրոխտ ձայն է հարկաւոր, և ոչ մասնկան սուր և նուրբ ձայնը, Եհա այս էր մեր վերը միշած երգարանի երկու մասն բաժանելու պատ- ճառը, այսինքն, յոյն հաստիաւոր մարդիկն, իսկ իշտու բարութեան հանիւ:

շինուիլ ամենելին երգի մի աննշան կետն անդամ իւր հին զրութիւնից կամ ձայնով կամ չափով քաջ զգալով որ տպագրութեան տակից նորա գուրս գալուց յետոյ կրկին շնու ուղղուիլ և հետևապէս սխալ երգած կիմի ժողովուրդը. մանաւանդ չափերի վերայ լաւ ուշագրութիւն դարձնել և շեռու պահել իւր այժմեան երգարանի ունեցած անթիւ և անհամար սխալ ներքց, որի մեջը զրաշարի վերայ է զնում, մինչգեռ ինքն էր սրբագրողը.

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE

ԱՐԴԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿԻ ԱԿՐԵՏՐՄԱՆԴՑ

կոյն առ պատճեն Ա. ը արքայի ամառագիւղի.

Օղը կիւրակի էր և երեկոյ՝ որ ատեն որ Ակքիրմանիս Հայք և Հայուածիք, օտապք և օտարուհիք խուռներամ իրենց աշխոյժ և եռանդնոտ երիտասարդներավ եկել և խոննել էին եկեղեցւոյ պարտէզն ու սրբահը. և անհամրներ Լուսութանին բացման կոպասէին. Ժամը եօթը կզարնէր, Լուսութանին գուռը բացուեցաւ ժողովրդեան առջև:

Լսարանին պատերն զարգարուած էին Հայոց հին և նոր բարերարաց և զիւցազանց կենդանագրերով։ Այս տմենուն վրայ և վերը կախուած էր Մեծին Աղէքսանդրի Բ.-ի Բարերինամ Կայսերն Ռուսիոյ ուժկերջանակ և փառունակ պատկերն։ որ ի վերուստն կդիտեր իւր հաւատարիմ՝ հպատակաց Հայոց Լսարանի բացման այս առաջին և սրտաշարժ հանդէսը։ Ի ձայն զանգակի զարոցին կրօնագիտութեան ուսուցիչն բարեցնորհ Տէր Արքա-համ քահանոյ Մարտութեանց միքիոնն ելաւ և «Աստուած սէր է» այս բնարանին վերայ բաւական խօսելով՝ տեղն ունցաւ՝ հանգիստականաց խո-քին շնորհակալութիւնն վայելելով։ Իհական վայրիկեան հանգիստ առնե-լով կարգաւ խօսեցան չետևեալ անձինք։

Հայերէնի ուսուցիչն՝ Հայոց հին և նոր կեանքն պատմելով, և ինչ ինչ խորհրդածութեամբ կնքեց իւր առենաբանութիւնը:

Զեռագործութեան վարժուհին Տիկին Աննա Տ. Գրիգորիեան, աղջկանց  
ձեռագործութեան վրայ խօսելով, և նորա կարեորութիւնն իմաստ զդալի  
ընելով ժողովրդեան խուռան ծափահարութեամբ մը պաւասիրուելով  
հանդիսականներէն թողուց ամրիւնն իրեն յաջորդ գծագրութեան և զե-  
շագրութեան ուսուցիչ Պ. Մկրտիչ Մկրտչեանի:

Երբ աւարտեցան ատենախօսութիւնը և ճառեր՝ «բարեգործական ընկերութիւն» անուամբ հաստատելի մի նոր ընկերութեան մ՝ խմբագրուած կանոնագիրը 40ի չափ անձնուք ստորագրելէն յիշայ՝ որոշեցին երկու օրէն յիշայ դալ և Ընկերութեան զիւանին կազմակերպութեան ձեռնարկել.